ՍԴ3/0263/01/25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

22 դեկտեմբերի 2025 թվական քաղաք Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ՍԴ3/0263/01/25 քրեական վարույթի տարածքային ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2025 թվականի դեկտեմբերի 1-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2022 թվականի ապրիլի 5-ին Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է թիվ 44178421 (ԱՎԴ2/0039/01/22) քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Արմեն Էդուարդի Մարտիրոսյանի՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՀՀ քրեական օրենսգիրք) 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և Էդգար Սերգեյի Կարագուլյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով:

1.1. Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Գ.Հովհաննիսյան) 2022 թվականի ապրիլի 6-ին որոշում է կայացրել թիվ ԱՎԴ2/0039/01/22 քրեական գործը վարույթ ընդունելու մասին:

2022 թվականի ապրիլի 20-ին որոշում է կայացվել թիվ ԱՎԴ2/0039/01/22 քրեական գործը դատական քննության նշանակելու մասին:

1.2. 2022 թվականի հոկտեմբերի 25-ին թիվ ԱՎԴ2/0039/01/22 քրեական գործը վերաբաշխվել է Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գ.Ստեփանյանին:

Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի հոկտեմբերի 27-ին որոշում է կայացրել թիվ ԱՎԴ2/0039/01/22 քրեական գործը վարույթ ընդունելու մասին:

2022 թվականի նոյեմբերի 10-ին որոշում է կայացվել թիվ ԱՎԴ2/0039/01/22 քրեական գործը դատական քննության նշանակելու մասին:

1.3. 2024 թվականի մարտի 27-ին թիվ ԱՎԴ2/0039/01/22 քրեական գործը վերաբաշխվել է Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մ.Գրիգորյանին:

Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի ապրիլի 5-ին որոշում է կայացրել թիվ ԱՎԴ2/0039/01/22 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

2. Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի մարտի 6-ին որոշում է կայացրել թիվ ԱՎԴ2/0039/01/22 քրեական վարույթն ըստ տարածքային ընդդատության Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին:

3. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Ա.Ոսկանյան) 2025 թվականի մարտի 24-ին որոշում է կայացրել թիվ ԱՎԴ2/0039/01/22 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի հոկտեմբերի 9-ին որոշում է կայացրել թիվ ԱՎԴ2/0039/01/22 քրեական վարույթից մեղադրյալ Էդգար Սերգեյի Կարագուլյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նոր վարույթ անջատելու մասին, որին շնորհվել է ՍԴ3/0263/01/25 համարը:

4. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Ա.Ոսկանյան) 2025 թվականի հոկտեմբերի 21-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ3/0263/01/25 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

4.1. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի նոյեմբերի 11-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ3/0263/01/25 քրեական վարույթն ըստ տարածքային ընդդատության Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին:

5. Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Վ.Վարդանյան) 2025 թվականի դեկտեմբերի 1-ին որոշում է

կայացրել թիվ ՍԴ3/0263/01/25 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

6. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2025 թվականի դեկտեմբերի 15-ին:

<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

7. Էդգար Կարագուլյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով՝ այն բանի համար, որ *«(…) նա 2021 թվականի հուլիսի 24-ին՝ ժամը 01:45-ի սահմաններում, Արմեն Էդուարդի Մարտիրոսյանի հետ խմբի կազմում, նախնական համաձայնությամբ, ապօրինի մուտք գործելով պահեստարան հանդիսացող մետաղադրամների համար նախատեսված պահոց և այնտեղ առկա մետաղադրամները գաղտնի հափշտակելու դիտավորությամբ, մետաղ կտրելու համար նախատեսված մկրատով կտրելով արկղերի դռան վրա առկա կախովի փականները, բացել են Կ.Ս.Մ.-ին պատկանող՝ ******* ***** ********* ****** ********** ****** **/*-** հասցեում գործող «Լվա ինքդ» ավտոլվացման կետի ավտոմեքենաների լվացման համար նախատեսված մետաղադրամներ ընդունող սարքի ու փոշեկուլի արկղի դուռը, ապօրինի մուտք են գործել պահեստարան հանդիսացող մետաղադրամների համար նախատեսված թվով 3 պահոցները և գաղտնի հափշտակել դրանց մեջ առկա ընդհանուր զգալի չափերի 15.000 ՀՀ դրամը: (…)»*[1]:

8. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը թիվ ԱՎԴ2/0039/01/22 քրեական վարույթից Է.Կարագուլյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նոր վարույթ անջատելու մասին որոշմամբ արձանագրել է հետևյալը *«(…) Դատարանը միջոցներ է ձեռնարկել վերոնշյալ քրեական գործով 2025 թվականի ապրիլի 3-ին, նույն թվականի մայիսի 20-ին և հունիսի 12-ին, հուլիսի 8-ին, հուլիսի 23-ին, սեպտեմբերի 9-ին և հոկտեմբերի 9-ին*

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 3, թերթեր 35-36:

նշանակված դատական նիստերին մեղադրյալ Էդգար Սերգեյի Կարագուլյանի մասնակցությունն ապահովելու համար, սակայն վերջինիս չներկայանալու պատճառով դատական նիստերը հետաձգվել են:

Քրեական գործում առկա փվյալների համաձայն՝ 2023 թվականի սեպտեմբերի 11-ից մեղադրյալ Էդգար Սերգեյի Կարագուլյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

2025 թվականի մարտի 28-ին Դատարանի կողմից գրություն է ուղարկվել ՀՀ ոստիկանության պետին պարզելու՝ Էդգար Սերգեյի Կարագուլյանի հայտնաբերելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների արդյունքների մասին, որին ի պատասխան նշվել է, որ ձեռնարկված միջոցառումների արդյունքում հնարավոր չի եղել հայտնաբերել մեղադրյալ Էդգար Սերգեյի Կարագուլյանի գտնվելու վայրը:

ՀՀ ՆԳՆ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության հետախուզության, ծայրահեղականության և թրաֆիքինգի դեմ պայքարի վարչության պետի կողմից՝ Էդգար Սերգեյի Կարագուլյանի վերաբերյալ ՍԷԿՏ համակարգում առկա տեղեկությունների համաձայն, մեղադրյալ Էդգար Սերգեյի Կարագուլյանը 2019 թվականի մայիսի 14-ից գտնվում է ՀՀ սահմաններից դուրս:

(...)

Դատարանը փաստում է, որ սույն դեպքում թիվ ԱՎԴ2/0039/01/22 քրեական վարույթից Էդգար Սերգեյի Կարագուլյան վերաբերյալ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նոր վարույթ անջատելը պայմանավորված է արդարադատության շահի պաշտպանության անհրաժեշտությամբ, քանի [որ] նշանակված դատական նիստերը չեն կայանում մեղադրյալ Էդգար Սերգեյի Կարագուլյանի բացակայության պատճառով:

Նման պայմաններում՝ Դատարանը գտնում է, որ նոր վարույթի անջատումն ըստ մեղադրանքի Էդգար Սերգեյի Կարագուլյան վերաբերյալ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, բխում է ոչ միայն արդարադատության շահերից, այլ նաև հիմք է տալիս վարույթի

ողջամիտ ժամկետի և դատական պաշտպանության ապահովման սկզբունքներն իրացնելու համար, քանի որ սույն դեպքում կապահովվի մեղադրյալ Արմեն Էդուարդի Մարտիրոսյանի ողջամիտ ժամկետում դատարանի առջև կանգնելու իրավունքը և արդարադատության շահը չի տուժի: (…)»[2]:

9. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի նոյեմբերի 11-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Դատարանը փաստում է, որ մեղադրյալ Էդգար Սերգեյի Կարագուլյանին մեղսագրված արարքը կատարվել և ավարտվել է ******* ***** ******* ****** ********** ****** **/*-** հասցեում, քանի որ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմի մեջ մտնող արարքը կատարվել և ավարտվել է հենց ******* ***** ******* ****** ********** ****** **/*-** հասցեում, ուստի ենթադրյալ հանցանքի կատարման և ավարտման դատարանի դատական տարածք է հանդիսանում Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը:*

Հիմքում ունենալով վերոնշյալը, ինչպես նաև անձի՝ ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունքի գերակայությունը՝ Դատարանը գտնում է, որ թիվ ՍԴ3/0263/01/25 վարույթը որոշմամբ պետք է փոխանցել Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության (…) դատարան: (…)»[3]:

10. Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի դեկտեմբերի 1-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) [Գ]տնում եմ, որ թիվ ՍԴ3/0263/01/25 քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխվել և վարույթը Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին*

---

[2] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 7, թերթեր 226-228:
[3] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 8, թերթեր 46-49:

ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցվել չէր կարող, հետևյալ պատճառաբանությամբ.

- Թեև Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի կիրառմամբ ինքնին իրավասու էր ըստ անհրաժեշտության թիվ ԱՎԴ2/0039/01/22 քրեական գործից անջատել այդ վարույթով մեղադրյալներից որևէ մեկի վերաբերյալ մասը, այնուհանդերձ դատարանն իրավասու չէր նշված որոշման հիմքով փոխել անջատված վարույթով քրեական գործի տարածքային ընդդատությունը, քանի որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը թիվ ԱՎԴ2/0039/01/22 քրեական գործը վարույթ է ընդունել ընդդատության կանոնների պահպանմամբ, հետևաբար այդ քրեական գործից որևէ մեղադրյալի վերաբերյալ նոր վարույթի անջատումը՝ քրեական վարույթի, այդ թվում՝ անջատված վարույթի ընդդատության փոփոխության վրա ազդել այլևս չէր կարող (...):

- ՀՀ բարձրագույն դատական խորհրդի 2021 թվականի մարտի 25-ի թիվ ԲԴԽ-16-Ն-6 որոշման 15-րդ կետի բովանդակությունը ևս վկայում է այն մասին, որ դատական գործից մաս անջատվելու դեպքում ինչպես անջատված մասը, այնպես էլ գործը՝ որից անջատվել է այն, շարունակում են մնալ ընդդատության կանոնների պահպանմամբ քրեական գործը վարույթ ընդունած դատարանում:

- Հակառակ մեկնաբանությունը ոչ միայն չի բխում մեջբերված իրավանորմերի տրամաբանությունից, այլև ուղղակի իմաստազուրկ է դարձնում առաջին ատյանի ընդհանուր իրավասության տարբեր դատարանների դատական տարածքներում ենթադրաբար կատարված երկու կամ ավելի ենթադրյալ հանցանքների կամ երկու կամ ավելի անձանց կողմից՝ այդ թվում մասամբ ենթադրյալ հանցակցությամբ կատարված հանցանքների ընդդատության քրեադատավարական «կանոնները», քանի որ, առհասարակ նմանատիպ իրավիճակներում ցանկացած դատարան, ստանալով որևէ քրեական գործ, որոշակի պատճառաբանությամբ, դրանից կարող է անջատել առանձին վերցված «իր» դատական տարածքին վերաբերող կամ չվերաբերող մասը և այդ կերպ

կարող են արհեստական հիմքեր ստեղծվել վարույթն ըստ տարածքային ընդդատության փոխանցելու համար, ինչն իրավաչափ համարվել չի կարող:

Ավելին՝ նկարագրված իրավիճակն անխուսափելիորեն կհանգեցնի յուրաքանչյուր անձի՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից իր գործի ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունքի խախտմանը, քանի որ չեն գործի յուրաքանչյուր քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնները, իսկ դատարանների կողմից քրեական գործերը վարույթ ընդունելն անկողմնակալ դիտորդի մոտ կարող է ձևավորել սուբյեկտիվիզմի, կամայականության ու անկանխատեսելիության համոզմունք:

Վերոգրյալից ակնհայտ է, որ «Քրեական գործն ըստ ընդդատության փոխանցելու» մասին Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2025 թվականի նոյեմբերի 11-ի որոշումը չի բխել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ և 263-րդ հոդվածների դրույթներից, քանի որ թիվ ԱՎԴ2/0039/01/22 քրեական գործը Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում վարույթ է ընդունվել ընդդատության կանոնների պահպանմամբ և դրանից հետագայում անջատված նոր վարույթով թիվ ՍԴ3/0263/01/25 քրեական գործի ընդդատությունը չէր կարող փոխվել, քանզի «Քրեական գործի վարույթից նոր վարույթ անջատելու մասին» որոշման ընդունումն, ըստ էության, չպետք է ստեղծի քրեական գործն ըստ տարածքային ընդդատության փոխանցելու արհեստական հիմքեր:

Ամփոփելով ասվածը՝ հայտնում եմ իմ անհամաձայնությունը թիվ ՍԴ3/0263/01/25 քրեական գործի (վարույթի) տարածքային ընդդատությանը, ուստի գտնում եմ, որ անհրաժեշտ է թիվ ՍԴ3/0263/01/25 վարույթն ուղարկել Վճռաբեկ դատարանի քրեական պալատ՝ տարածքային ընդդատության հարցը լուծելու նպատակով: (…)»[4]*:*

[4] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 8, թերթեր 60-65:

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

11. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՍԴ3/0263/01/25 քրեական վարույթն ընդդատյա է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

12. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

13. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (…) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

13.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[5]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց*

---

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»[6]:

14. Վճռաբեկ դատարանն անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հիմնարար նշանակության վերաբերյալ իրավական դիրքորոշում է ձևավորել *Գևորգ Հարությունյանի* որոշմամբ[7]:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի համաձայն՝ «*1.Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա են այն վարույթները, որոնք վերաբերում են այդ դատարանի դատական տարածքում ենթադրաբար կատարված հանցանքներին՝ անկախ քննչական ենթակայության կանոններից:*

2. Եթե վարույթը վերաբերում է առաջին ատյանի ընդհանուր իրավասության տարբեր դատարանների դատական տարածքներում ենթադրաբար կատարված երկու կամ ավելի հանցանքներին, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում ենթադրաբար կատարվել է վերջին հանցանքը: (…)»:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) 4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:*

(…)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (…)»:

---

[6] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

[7] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

16. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, Ա.Մարտիրոսյանի և Է.Կարագուլյանի վերաբերյալ քրեական վարույթով 2025 թվականի հոկտեմբերի 9-ին որոշում է կայացրել Է.Կարագուլյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նոր վարույթ անջատելու մասին և 2025 թվականի նոյեմբերի 11-ի որոշմամբ վերոնշյալ քրեական վարույթն ըստ տարածքային ընդդատության փոխանցել է Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ պատճառաբանելով, որ մեղադրյալին վերագրվող ենթադրյալ հանցանքը կատարվել է Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում[8]:

- Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, արձանագրելով, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը թիվ ԱՎԴ2/0039/01/22 քրեական գործը վարույթ է ընդունել ընդդատության կանոնների պահպանմամբ, գտել է, որ դրանից հետագայում նոր վարույթ անջատելը չէր կարող հիմք հանդիսանալ վարույթի ընդդատությունը փոխելու համար[9]:

17. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը թիվ ԱՎԴ2/0039/01/22 քրեական վարույթը 2025 թվականի մարտի 24-ին ստանձնել է ընդդատության կանոնների պահպանմամբ, որից հետո, 2025 թվականի հոկտեմբերի 9-ին, որոշում է կայացրել թիվ ԱՎԴ2/0039/01/22 քրեական վարույթից մեղադրյալ Էդգար Կարագուլյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նոր վարույթ անջատելու մասին: Այնուհետև Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի նոյեմբերի 11-ին քննարկման առարկա է դարձրել սույն վարույթի տարածքային ընդդատության հարցը և

---

[8] Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:
[9] Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

արդյունքում որոշում կայացրել Է.Կարագուլյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով թիվ ՍԴ3/0263/01/25 քրեական վարույթն ըստ ընդդատության Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանի քրեական պալատն ընդունելի է համարում Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատողությունն այն մասին, որ ընդդատության կանոնների պահպանմամբ քրեական վարույթն ստանձնելուց հետո մեղադրյալ Է.Կարագուլյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նոր վարույթ անջատելու մասին Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշումն ինքնին չէր կարող հիմք հանդիսանալ տվյալ քրեական վարույթի տարածքային ընդդատության հարցը վերստին քննարկելու և վարույթն ըստ ընդդատության այլ դատարան փոխանցելու համար: Այլ կերպ, ընդդատության կանոնների պահպանմամբ ստանձնված քրեական վարույթից նոր վարույթ անջատելու և միայն դրանով պայմանավորված թիվ ՍԴ3/0263/01/25 քրեական վարույթն ըստ ընդդատության Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունները տարածքային ընդդատության հարցը վերստին քննարկելու անհրաժեշտության մասին վկայող բացառիկ հիմքերի բացակայության պայմաններում, սույն դեպքում, չեն կարող ընդունելի համարվել, քանի որ նշված մոտեցումը չի ծառայում արդարադատության շահին:

18. Միաժամանակ, անդրադառնալով Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ մեղադրյալ Է.Կարագուլյանի հետախուզման մեջ գտնվելու վերաբերյալ դատողությանը, հարկ է նշել, որ վերջինս մեկ այլ վարույթով հետախուզման մեջ է գտնվում դեռևս 2023 թվականի սեպտեմբերից:

19. Վերոշարադրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՍԴ3/0263/01/25 քրեական վարույթն ընդդատյա է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, հիմնավոր է:

20. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ թիվ ՍԴ3/0263/01/25 քրեական վարույթն ընդդատյա է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Էդգար Սերգեյի Կարագուլյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով թիվ ՍԴ3/0263/01/25 քրեական վարույթն ընդդատյա է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Նախագահող՝ Լ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ

Ա.ՊՈՂՈՍՅԱՆ